

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԻ ԱՇԽԱՐՀԻՑ

«Ապուշ» Դոստոևսկու «ապուշները» և «խելօքները» կեանքի մէջ. — «Փողի հերոսը» Օ. Միրբօի. կապիտալիզմը որպէս նիւթ զեղարուեստական երկի. — «Էքսաննի» Վ. Հիւգօի. ասպետական ժամանակները. Հիւգօի ոճը. — «Զազա» Բերտոնի և Սիմոնի:

Հայոց Դրամատիկական Ընկերութեան խումբը ղեկաւորելով 29-ին ներկայացրեց Դոստոևսկու «Ապուշ» դրաման: Պ. Ալիխանեանի բեմեքիան էր այդ երեկոն:

Ընտրութիւնը յաջող էր: Դոստոևսկին մի մույլ ու խոհուն ոգի է, որ իր երկերի մէջ խօսում է ասես անդրդիրմեան աշխարհից: Եւ մարդ սարսուռով է մտածում, որ այդ հեռաւոր ու մութ աշխարհը ինքը հէնց իր կրծքի տակ, իր հոգու մէջ է կրում: Մարդկային յարաբերութիւնները իրանց արտաքին վայելչութեան տակ պահում են այնքան ծածուկ բաներ, որ երբ մի Դոստոևսկի յետ է քաշում քօղը, կեանքը ներկայանում է որպէս զեռուններով լի մի զարշահոտ ճահիճ, կամ որպէս ցաւերի մի հսկայ հովիտ: «Ապուշ»-ը Դոստոևսկու հէնց այն երկերից մէկն է, ուր մարդկային հոգին բաց է անում իր խորշերը աշխարհի լոյսի առաջ՝ սոսկում և զարմանք պատճառելով: Հերոսը՝ երիտասարդ իշխան Մըիշկին, որին հեղինակը անուանել է «ապուշ», իրօք մի հիւանդագին դիւրազգածութեամբ, անձանման բարութեամբ օժտուած հոգի է: Եւ այդ «ապուշ» անունը, որի դէմ նա բնաւ չի բողոքում, իր շրթունքներից հնչում է ամեն անգամ մի տրագիկական հեգնութիւնով. Մըիշկինը մի եթերային արարած է կարծես եկած այլ աշխարհից և իր միջավայրը չի հասկանում. իր ճանապարհի վրայ կանգնած դէմքերի և դէպքերի հանդէպ բոլորովին ապուշ է կտրում: Իր շրթունքների և իր հոգու մէջ ոչ մի պատուար չկայ, նրա ճենքը» և «դուրսը» բո-

լորովին նոյնն են: Մետերլինկ մի տեղ ինքն իրան հարցնում է, թէ ի՞նչ կը պատահէր, եթէ մարդիկ յանկարծ կարողանային «իրար ներքինը տեսնել միանգամայն բաց աչքով, օրը ցերեկով, որ հոգիները այլևս փոխադարձ գաղտնիքներ չունենային: Ի՞նչ կը լինէր... Դ՛ի գիտէ, բայց առայժմ ահա նրանցից մէկը, այս խղճալի իշխան Մըիշկինը, որին չորս կողմից կանչում են «ապուշ», որովհետեւ մարդը անկարող է ըմբռնել այնքան անխորհուրդ չարիքները, չգիտէ, ի՞նչ ասել է գաղտնիք, դաւ, խաղաւանանք և քայլում է կարծես «կուրծքը բաց», սիրտը աշխարհի առաջ: Նա «ապուշ է», որովհետեւ մենակ է: Եւ այդ «ապուշ»-ը մենամենակ խղճում է աշխարհին, որովհետեւ կեանքի խորը ցաւերի բուռն գիտակցութիւնն ունի: Նա գիտէ, որ իւրաքանչիւր արարած դժբախտութեան մի անխուսափելի բաժին ունի, որ ամենքը մի աներևոյթ մղումով իրար բզկտում, քրքրում են, և իր հոգու խորքում լալիս է ամենքի համար: Նա շատ անգամ տեսնում է կեանքի և մարդկանց մէջ բաներ, որ «խեղճները» չեն տեսնում: Երբ Բարաշկովան Բագոթինի հարիւր հազարանոց թղթադրամի ծալը կրակն է նետում՝ առաջարկելով Գանին դուրս հանել այն, «թո՛ղ վառուի, բացազանչում է Մըիշկինը. նրանից չարիք է ծնում», և զարմանում է, որ մարդիկ նետում են այն կորստաբեր բանը բոցերից ազատելու համար: Եւ իրօք՝ որքան ցաւ, որքան ամօթանք կար կապուած թղթադրամների այդ հաստ ծալքի հետ. դա Բարաշկովայի անարգանքի, հոգեկան մուժ կսկիծների, ծածուկ վըշտերի և արցունքի գինն էր: Ահա և իր տեսակի մի ուրիշ «ապուշ», այս Բարաշկովան, մի կին, որի ամբողջ կեանքում այնքան շատ են անօրինակութիւններ, սովորական հասկացողութիւնների համար հանելուկներ, համարեա գժութիւններ: Նա սառնասրտութեամբ կրակն է նետում Բագոթինի իրան առաջարկած հարիւր հազարը և գնում է այս բիրտ ու կրքոտ մարդի յետեից, որին չի սիրում, հրաժարում է Մըիշկինից, որին սիրում է, մինչդեռ հնարաւորութիւն ունի չանել առաջինը և հեշտութեամբ գլուխ բերել երկրորդը: Սա էլ մի «ապուշ է», որովհետեւ կեանքը, երջանկութիւնը, սէրը ըմբռնում է իր ձեռով, իր առանձին անհատական բարոյականութիւնն ունի անկախ միջավայրից, իր ղեկավարող սկզբունքները, որ նա հանում է իր սրտի ամենանուիրական անկիւններից: Մըիշկին և Բարաշկովա, երկու մոլորուածներ, երկու «տարներ» են կեանքի մեծ անապատում, որոնք հանդիպում են իրար կարծես նրա համար, որ իւրաքանչիւրի մենակութեան սարսափը մի փոքր նուազի, և ապա գնում են տարբեր կողմեր: Որքան վեհութիւն և տրա-

գիզմ կայ այդ կամաւոր անշատման մէջ, «մենակները» աշխարհում «մենակ» էլ պիտի քայլեն. դա նրանց դժբախտութիւնն է և մեծութիւնը միաժամանակ:

Մենք առաջ չենք բերի Դոստոեւսկու այս երկի մանրամասըն բովանդակութիւնը, քանի որ դա չափազանց յայտնի է: Բաւականանանք այս մի քանի ընդհանուր գծերով և անցնենք խաղին:

Գլխաւոր տիպերից մէկը՝ Ապուշի դերը կատարում էր պ. Ալիխանեան: Խոստովանում ենք, որ ներկայացումից առաջ Մըիշկինի դերը մենք նրա ոյժից վեր էինք համարում և այն պարզ համոզումով, որ առհասարակ Դոստոեւսկին վտանգաւոր հեղինակ է չափաւոր ձիւղքերի համար: Ուրախ ենք ասել, որ մեր և շատերի սկեպտիցիզմը սխալ դուրս եկաւ, և պ. Ալիխանեան այդ երեկոյ պատուով գլուխ տարաւ իր յանձն առած ծանր պարագը: Նրա խաղը ծայրէիծայրանցաւ հարթ, գեղեցիկ, և երիտասարդ արտիստը մեր աչքում էլի մի աստիճան բարձրացաւ: Մի քանի անգամ նա մինչևիսկ կարողացաւ ընդհանուր յուզմունք առաջ բերել: Եւ այն ժամանակ, երբ Գանը ապտակում է Մըիշկինին, և մանաւանդ երբ Բարաշկովան ձգում է նրան, պ. Ալիխանեան ցոյց տուեց հոգեկան խորին յուզմունքներ ըմբռնելու և արտայայտելու անպայման շնորհք: Իսկ վերջին գործողութեան մէջ Մըիշկինի զգացած խորհրդաւոր և անագին սարսափը սիրած կնոջ եղբրական մահուան առաջ, իր մեծ սրտի վշտոտ ճիչը, թէ պէտք է խղճալ ամենին, և՛ զոհերին, և՛ դահիճներին, և՛ չարերին ու բարիներին, նա արտայայտեց հիանալի կերպով: Եղան վայրկեաններ, երբ ողջ դահիճուժար լուութեան մէջ ասես իշխում էին բեմից լսուող հեծկտանքները:

Կրկնում ենք՝ պ. Ալիխանեանի յաջութիւնն այդ երեկոյ համարեա անպայման էր և, ինչպէս ասացինք, անակնկալ էր: Գուցէ շատ անադար չլինենք դէպի արտիստը, թէ ասենք, որ այդ յաջողութեան գոնէ մի մասը վերադրելի է նաև իր դերին: Բանն այն է, որ Մըիշկինը բնաւորութեան բարդութեան կողմից շատ աւելի նուազ արժէք ունի, քան՝ օրինակ՝ Բարաշկովան: Մըիշկինի դերը չի պարունակում հոգեկան յոյզերի այն փոթորիկը, այն անօրինակ յեղեղումները, որոնք ստորջրեայ ժայռեր են հանդիսանում դերասանների համար, և որոնց վրայից նաւելու համար մեծ հմտութիւն և աշաւրջութիւն է հարկաւոր: Մըիշկինի առանց այն էլ ոչ բարդ դերը պ. Ալիխանեան իր խաղով էլ աւելի միակերպ դարձրեց: Սա համարեա միակ և աչքի ընկնող թերութիւնն էր: Սրանով հանդերձ մենք հա-

ւատացած ենք, որ երիտասարդ արտիստը ապագայում հաճելի անակնկալներ պիտի կարողանայ մատակարարել՝ հայ բեմին: Հարկաւոր է միայն աշխատել, անընդհատ աշխատել լայն գեղարուեստական զարգացում ձեռք բերել, մօտիկից ծանօթանալ, նոյնիսկ իւրացնել խոշոր տաղանդների երկերը, կարողանալ ապրել մեծ յոյզերը: Իւրաքանչիւր դերասան կարող է համոզուած լինել, որ մեր ժամանակներում «տգէտ դերասան» հասկացողութիւնը մի անմտութիւն է, մի անկարելիութիւն:

Եթէ մենք մի փոքր երկար զբաղուեցինք պ. Ալիխանեանի խաղով, այդ նրա համար էր, որ պարոնը այդ երեկոյ առաջին անգամ աճքի ընկաւ: Սակայն «Ապուշ»-ի մէջ աւելի պատասխանատու և իրապէս մեծ հմտութիւն և տաղանդ պահանջող դերը տ. Սիրանոյշի ստանձնածն էր (Բարաշկովա): Այդ երեկոյ տիկինը իր գեղեցիկ խաղով էլ աւելի բարձրացաւ ընդհանուրի աչքում, քանի որ պիեսայի նիւթը նրան միանգամայն անծանօթ՝ ռուսական միջավայրից էր: Անշուշտ սա առաջին անգամը չէր, որ նա դուրս էր գալիս ռուսական դրամայում, բայց այս դերը շատ աւելի դժուար էր, քան մինչև այդ օրը խաղացուած բոլոր միւս դերերը: Եւ այնուամենայնիւ տ. Սիրանոյշը ընդհանուրի հիացմունքի առարկան եղաւ: Իսկական տաղանդները շատ դժուարութիւններ հարթելու գաղտնիքը գիտեն: Երբորդ և ոչ պակաս պատասխանատու դերը յանձն էր առել պ. Պետրոսեան (Րազոթին), որի մտածուած խաղը եկաւ լրացնելու «Ապուշ»-ի գեղեցիկ ամբողջութիւնը և ցնցող տպաւորութիւնը:

*
*
*

Յունուարի 8-ին պ. Պետրոսեանի բննեֆիսն էր, և խաղացուեց Օկտաւ Միրբօի յայտնի դրաման՝ «Փողի Հերոսը» (Les affaires sont les affaires)՝ «Մուրճ»-ում լոյս տեսած Թարգմանութեամբ:

Բովանդակութիւնն առաջ չենք բերի, որովհետեւ անցեալ տարի այդ մասին երկարօրէն խօսուած է մեր ամսագրի էջերում *). յիշեցնենք միայն, որ ֆրանսիացի տաղանդաւոր և վերին աստիճանի օրիգինալ հեղինակը իր այս նոր երկի նիւթը վերցրել է ժամանակակից կապիտալիզմի շրջանից, որ նա մեծ հմտութեամբ պատկերացրել է Իսիդոր Լըշայի մէջ: Կապիտալը Միրբօի գրչի տակ դարձել է մի գիտակից անոնի

*) Յե՛ն «Մուրճ», 1903, № 6.

ոյժ, մի հրէշ, որ անցնում է՝ փշրելով անթիւ մանր-մունր դո-
յութիւններ՝ եզակի և հազագիւտ բախտեր ստեղծելու հա-
մար: Գործողութիւն համարեա թէ չկայ այդ պիեսայի մէջ և
կամ շատ քիչ, բայց դրա փոխարէն կայ պատկեր, ուժեղ ու
ցնցող, ինչպէս բնութեան մի աւերիչ ոյժի նկարագիր: Այս
դրամայի ներկայացումից յետոյ միայն հասկանալի է դառ-
նում, թէ ինչպէս է կարողացել Միրբօն մի այնպիսի չոր և
սրտին ոչինչ չասող նիւթ—ինչպիսին է կապիտալիզմը—գե-
ղարուեստական երկի սիւսեւտ դարձնել: Նրա Իսիդոր Լըշան
իր մէջ մի պոէզիա ունի, ինչպէս ամեն մի աւերած, որին
գուզընթաց է սարսափը: Աւերիչ փոթորիկը, որ մոնչում է
մեր գլուխների վրայ, նոյնպէս սոսկալի չէ՝ և բանաստեղծական
միաժամանակ: Միրբօի Լըշան մի այդպիսի փոթորիկ է:

Շնորհիւ մի քանի բեմական պակասութիւնների՝ այս հե-
տաքօքի պիեսայի ներկայացումը սաստիկ դժուարանում է և
հեշտութեամբ կարող է ձանձրալի դառնալ: Բարեբախտաբար
յոժուարի 8-ի ներկայացումը ոչ միայն ձանձրալի չեղաւ,
այլ նոյնիսկ ծայրէծայր անցաւ աչքի ընկնող յաջողութեամբ:
Պարզ նկատուում էր, որ դերակատարները առանձին աշխատանք
էին թափել դրամայի դժուարութիւններից դուրս գալու հա-
մար: Պ. Պետրոսեանը ուսումնասիրել էր Լըշայի դերը մին-
չև հնարաւոր հոգեբանական նրբութիւնները: Բռնակալ՝ իր
տանը, ցինիկ, անպատկառ անգամ իր սեփական զաւակ-
ների հետ, հանճարեղ՝ աֆֆերանների մէջ, անողորմ ու գը-
ծուծ՝ թոյլերի վերաբերմամբ, տգէտ, բայց մեծամիտ, մի խօս-
քով ըստամենայնի մի բարդ բնաւորութիւն էր, որ նա կարո-
ղացաւ յաջողութեամբ պատկերացնել: Հասկանալի է, թէ ին-
չու հասարակութիւնը բազմաթիւ անգամ բեմ կանչեց հայ
բեմի աշխատաւոր մշակին և վարձատրեց բոլո՛ւն ծափահարու-
թեամբ ու ընծաներով:

Այս դրամայի միւս բոլոր դերերը համարեա երկրորդա-
կան են, նրանցից շատ բան կախուած չէ: Բայց շնորհիւ դերե-
րի շատ յաջող բաշխման և դերակատարների բարեխիղճ վե-
րաբերմունքին՝ կարելի եղաւ խաղի ամբողջութիւնը կատա-
րեալ դարձնել:

*
**

Տարաբախտաբար նոյնպիսի յաջողութիւն չունեցաւ Վ.
Հիւգօի «Էրնանի»-ն, որ պ. Յարութիւնեան ընտրել էր իր բենե-
ֆիսի համար յունուարի 15-ին: Այս բոմանտիկ երկի նիւթը

վերցրած է այն հերոսական ժամանակներէց, երբ ասպետութիւնը դեռ իր փայլի մէջ էր, մարդկային յարաբերութիւնները, պարտքերը և իրաւունքները շատ անգամ իբրև հիմունք ունէին մի խօսք, մի երգում, մի խոստում, Հիւզօն՝ գերազանցօրէն բոմանտիկ այս հանճարը, «Էրնանի»-ի մէջ իրար դէմ է հանել երկու կիրք, երկուսն էլ բուն ու անզուսպ, և դրանց բաղխումի վրայ հաստատել արագեղիւն: Այստեղ չորս տիպեր կան, հարաւի արևի տակ բոբբոքուած չորս ժայռեր լինեն ասիւ, որոնք ընդհարում են ու ճարճատում: Էրնանին իսպանական թագաւորի դէմ գլուխ բարձրացրած մի ըմբոստ է, որ իր լեռնային որջից երբեմն ցած է իջնում մի գաղտնի սիրոյ համար, հարաւի սէր՝ անզուսպ ու կատաղի: Եւ այդ թափառական ու ամեն բանից ձեռք վերցրած աւագակապետը իր ճանապարհի վրայ ունի մի դուքս՝ Գոմեցի դը-Սիլվա, և մի թագաւոր՝ Դոն-Կարլոս, որ յետոյ կը դառնայ կայսր Կարլոս V.: Երեքն էլ երկաթի բնաւորութիւններ, որոնք կուտն են՝ տարուած միեւնոյն զգացմունքով և միեւնոյն աղջկայ համար: Դոնա-Սիլվան ծերունի Գոմեցի եղբօր աղջիկն է և սիրում է այս պայքարողներէց առաջինին, գեղեցիկ, քաջ, երիտասարդ, աղնիւ Էրնանիին: Մի դուքս և մի թագաւոր նրան ընկճել չեն կարող, նա էլ հարաւի մի տաք կրքոտ ծայրայեղ բնաւորութիւն է:

Կոիւր տաք է և բացճակատ. խարդաւանանքներ, դաւեր, թակարդներ չկան, ոչ մէկը միւսից չի ուզում յետ մնալ մեծահոգութեան մէջ: Հանճարի փայլով լուսաւորուած է մի ամբողջ աշխարհ, որ շատ հին չէ և որ ոչնչով նման չի մերին: Այս մարդիկ կարծես ուրիշ շաղախից են ծեփուած, յաղթանակի և պարտութեան մէջ հաւասարապէս հսկանք են: Հարուստ, բազմաբովանդակ նիւթ մի այնպիսի խոշոր բոմանտիկի գրչի համար, որպիսին էր Հիւզօն: Նրա զօրեղ ոճը, ճոխ լեզուն պատկերներէ փոխարէն տալիս է շառաչալից ջրվէժներ ու հեղեղ, որ թափւում է, թափւում, ասես վերջը չառնելու համար: Անգամ սովորական խօսակցութիւնը Հիւզօի գրչի տակ իր անօրինակ ուժգնութեամբ ընդունում է կատաղի մենամարտի կերպարանք:

Սիրահար թագաւորը մեծահոգի կայսր է դառնում և զիջում Դոնա-Սիլվան Էրնանիին, բայց Գոմեցի դը-Սիլվան մի վշտացած ծեր է, խանդոտ, կատաղի ծեր, որ առանց զայրոյթի տեսնել չի կարողանում երիտասարդ կեանքի իրաւունքները, որ չի կարողանում հաշտուել արդէն իր դուռը բաղխող մահուան հետ: Նա չի թոյլ տալ Էրնանիին երջանիկ լինել

Դոննա-Սիլվայի հետ և շնորհիւ մի հանդիսաւոր խոստումի, որով երիտասարդ ասպետը իր կեանքն էր դրել նրա տրամադրութեան տակ, նրան կը ստիպի թոյն ընդունել և մեռնել: Այնուհետև թունաւորուած կը մեռնեն և՛ ինքը, և՛ Դոննա-Սիլվան:

Ահա մօտաւորապէս այն դրամայի բովանդակութիւնը և ոգին, որ խաղացուեց յունուարի 15-ին: Անուրանալի է, որ մի այնպիսի կեանք, որպիսին է ասպետականը, խիստ դժուար է վերապրել և վերարտադրել, բայց և այնպէս էրնանիի խաղը սպասածից էլ վար մնաց: Պ. Յարութիւնեան իր պարտքը կատարեց բարեխղճօրէն, որպէս Դոմեց դը-Սիլվա նա շատ էր աշխատել և ծայրէիծալը յաջող տարաւ: Այդ դերը գուցէ և մասամբ համապատասխանում է նրան, որ միշտ հակամէտ է դէպի դիւցազներգական ոճը իր լուրջ մենախօսութիւնների մէջ: Պ. Պետրոսեան շատ լաւ Դոն Կարլոս չէր, և անպայման, թոյլ կայսր եղաւ: Իր դերի ամենալաւ կտորը՝ մենախօսութիւնը Շարլլմանի դամբարանի առաջ, նա անգոյն կատարեց և տպաւորութիւն չթողեց. էրնանիի այդ կտորը Հիւգօի ամենաընտիր բանաստեղծական զեղումներից մէկն է, նրա «Դարերի Լեգենդա»-ի մի մասն է կարծես, բոմանտիկ պատկերաւոր ոճի հազաւգիւտ նմուշ: Պ. Պետրոսեանի արտասանութեամբ հիւգօեան ոճը և կայսերական ոգին խիստ զուստ դուրս եկան: Մնացած մասերում էլ նրա խաղը ցանկալի բազմազանութիւնը չներկայացրեց:

Տ. Սիրանոյշի համար (Դոննա-Սիլվա) կարելի է վճռաբար ասել, որ նա այդ երեկոյ սառը խաղաց, իրան յատուկ կենդանութիւնը չտուեց բեմին: Սրտով, կենդանի խաղաց միայն պ. Արելեան էրնանիի դերը, որ ի դէպ է ասել, նրան խիստ պատշաճում էր:

*
*
*

Հինգշաբթի, յունուարի 22-ին տ. Մայսուրեան իր բենեֆիսի համար ընտրել էր «Ջազա», հեղինակութիւն Բերտոնի և Սիմօնի: Այս ընտրութիւնն ըստ ամենայնի անյաջող էր: Ի դէպ է այստեղ ասել, որ մեր դերասանները մեծաւ մասամբ իրանց բենեֆիսներին պիեսա ընտրելիս ցոյց են տալիս մի բացառիկ և ցաւալի անշրջանկատութիւն: Տ. Մայսուրեան իր ընտրութեամբ նոյն սխալի մէջ ընկաւ, ինչ տ. Սիրանոյշ անցեալ տարի և ուրիշները զանազան ժամանակներում: Մեր կարծիքով այդ «Ջազան» մի ոչինչ գործ է, և կարելի էր համարձակ դուրս ձգել թատրոնական բեպերտուարից: Տրամաբանութիւնը

մուսններու բորբոքումէ մը հիւծուած, քայքայուած՝ Նապոլէոնի զաւակը կը մեռնի խաղաղ ու սրտայոյզ մահով:

Ահա այն թատերախաղը, որու շնորհիւ Ռոստան իր առջև լաց գտաւ Ֆրանսական ակադեմիայի դռները: Մենք կարող ենք չհամակրել «Արծւիկ»-ի հեղինակին ուղղութեան, բայց անկարելի է ուրանալ, որ Ռոստանը տաղանդ մըն է, այն ալ մեծ տաղանդ մը:

Գալով խաղին՝ մենք տեսած ըլլալով Սառա Բերնարը՝ «Արծւիկ»-ի դերին և Գիտրին՝ (Guiltry) Կոլէնի (երէց) համահաւասար տաղանդ ունեցող դերասանը՝ Ֆլամբօի դերին մէջ, բընական է, որ հայ բեմի վրայ դրուած ներկայացումը նոյնքան կատարեալ չգտնէինք, որքան Ֆրանսականին վրայ: Բայց, համեմատութիւնները պահելով՝ պէտք է ըսենք, որ երեք գլխաւոր դերերը—Արծւիկը (տ. Միբանոյշ), Ֆլամբօն (պ. Աբելեան) և Մետերնիսը (պ. Յարութիւնեան) ճարտար ու յաջող կերպով իրագործուեցան: Տիկին Միբանոյշ և պ. Աբելեան անգամ մըն ալ ցոյց տուին, թէ հայ բեմը երբէք արժանի չէ արհամարհանքի: Բայց այդ երկու առաջնակարգ ուժերը ծանօթ են արդէն հասարակութեան իրենց անժխտելի տաղանդով: Երբորդը սակայն, պ. Յարութիւնեան, այս տարի, գրեթէ ամեն ներկայացումի մէջ ցոյց տուած իր մեծ շնորհքով և զեղեցիկ, մըտածուած խաղով՝ կատարեալ յայտնութիւն մը եղաւ: Պ. Յարութիւնեանի լաւագոյն դերերէն մէկն է Մետերնիսը՝ որը ներկայացուց եւրոպական մտքով աւնուած դերասանի մը հըմտութեամբ, առանց չափազանցութիւններու մէջ ընկնելու, առանց կեղծիքի: Միւս դերասանները խաղացին աւելի կամ պակաս յաջողութեամբ. միայն եթէ կայ դիտելու կէտ մը, այն ալ ընդհանրապէս խաղի դանդաղութիւնն էր: Մասնաւոր ֆրանսերէնէ թարգմանուած պիեսներու մէջ անհրաժեշտ է երեւան բերել սովորականէն աւելի դիւրաթեքութիւն և աշխուժութիւն: Անտարակոյս «Արծւիկ»-ի մէջ դերասաններու ցոյց տուած դանդաղութիւնը մասամբ վերագրելի էր այն բանին, որ բնագիրը ոտնաւոր է, իսկ թարգմանութիւնը արձակ էր: Ոտանաւորը՝ աւելի աշխոյժով և հեշտութեամբ դուրս կու գայ դերասանի բերնէն, քան արձակը: Եւ յետոյ՝ միշտ անպատեհութիւն մըն է ոտանաւոր պիեսը արձակ ներկայացնել: Թարգմանիչը՝ անհրաժեշտ է որ նկատի ունենայ այն հանգամանքը, թէ ոտանաւորին մէջ կան բառեր, գուցէ և ամբողջ նախադասութիւններ, որոնք դրուած են պարզապէս որոշ թւով վանկ ունենալու և յարմար յանգ ստեղծելու համար: Հետևաբար պէտք է ջնջել այն մասերը, որոնք արձակը կը ծանրացնեն:

«Արծալիկ»-ի մէջ նշմարելի էր և ուրիշ թերուծիւն մը, որը աւելի բեժխեղորին կը պատկանի, քան թէ դերասաններուն։ Ե. գործողութեան մէջ, Վազրամի դաշտին վրայ պառկած պէտք է ըլլան զինուորներ, նախ ծածկուած, յետոյ աղաղակներու, զանգատներու, ողբերու ժամանակ քիչ խլրտուն։ Ձայները անոնցմէ պէտք է զան, և ոչ թէ կուլիսի ետևներէն։ Այնպէս որ, երբ Արծալիկ՝ վերաւորուած զինուորներ, ուրուականներ կը տեսնէ, և անոնց հետ կը խօսի, պէտք է որ անոնք բեմին վրայ գոյութիւն ունենան։ Դոնէ Պարիզի մէջ մեր տեսած ներկայացման մէջ այդպէս էր։ Վերջին փոքրիկ դիտողութիւն մըն ալ։ Ֆլամբօի դերը իր մէջ ծիծաղ երբէք չի պարունակեր. եզան սակայն բոպէներ, ուր պ. Արեւեան ծիծաղեցուց հասարակութիւնը Ֆլամբօի շարժուձևերով և խօսքերով։ Պէտք է խուսափիլ այդ փոքրիկ թիւրիմացութենէն։ Պ. Արեւեանի Ֆլամբօն անթերի, կատարեալ պիտի ըլլար, եթէ «Իսկ մենք փոքրերս, անցորդներս» քնարերգական հոյակապ կտորը աւելի ոգևորութեամբ և աւելի արագ արտասանուէր. բան մը, զոր ըրաւ Գիտրի։ Իսկ ընդհակառակը՝ այն մասը, ուր Ֆլամբօ ինքզինքը կը ծանօթացնէ «Ժան-Պիեր-Սերաֆէն-Ֆլամբօ և այլն», հատիկ-հատիկ, աւելի դանդաղ ու իւրաքանչիւր բառը ընդգծելով պէտք էր արտասանել, ու շատ լաւ արտասանեց պ. Արեւեան։

Խաղը բեմ հանուած էր մէկ քանի թեթև կրճատումներով։ Տ. Սիրանոյշ այդ գիշեր չափազանց յոգնեցաւ, բայց իր յոգնութեան չափով ալ վարձատրուեցաւ ծափերով և այլևայլ ընծաներով։ Թատրոնը վերէն վար, առանց մէկ հատ պարապ տեղ մնալու, լեցուն էր։ Տ. Սիրանոյշ արժանի էր այդ խանգավառ գնահատութեան։

ՏԻԳՐԱՆ